

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԲԱՍԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բասեն համայնքի 2017-2020 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից և դրվում է գործողության մեջ: ՀԶԾ իրենից ներկայցնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործնթացի իրականացումը:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Համայնքի իրավիճակի գնահատումը համայնքը բնութագրող, ներկայացնող հատկանիշների և բաղադրիչների վերլուծությունն է:

Բասեն (Մուսայելյան) համայնքի գնահատման չափանիշները՝ նկատի ունենալով համայնքի ստեղծման, զարգացման սոցիալ- տնտեսական և մի շարք առանձնահատկություններ, կարելի է դասակարգել ըստ հետևյալ բաղադրիչների՝

1. Պատմական տեղեկություններ համայնքի մասին
2. Աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները
3. Ժողովրդագրությունը
4. Համայնքի տնտեսության վերլուծությունը, սոցիալական ենթակառուցվածքները
- 5.Տեղական ինքնակառավարման համակարգի վերլուծությունը, սոցիալական ենթակառուցվածքները

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Շիրակի մարզի Բասեն գյուղը հիմնադրվել է 1813-1817թթ Արևմտյան Հայաստանի Բասենի, Մուշի, Կարսի, Սեբաստիայի, Ալաշկերտի գավառներից տեղահանված հայերի կողմից: Հիմնադրման պահից մինչև 1935թ գյուղը կոչվել է Քափանակ, 1935թ-ից՝ վերանվանվել Սուսայեյլան:

Գյուղի ազգաբնակչությունը հայեր են: Գյուղն իր մասնակցությունն է ունեցել ինչպես 20-րդ դարի սկզբին, այնպես էլ հետագա տարիներին երկրում կատարված փոփոխություններին, անցել է խորհրդացման և կոլեկտիվացման բարդ ժամանակաշրջանը, մասնակցություն է ունեցել Հայրենական Մեծ պատերազմին՝ հետպատերազմյան ազատամարտին: Գյուղն ունեցել է թեմական դպրոց , որի բազայի վրա 1935 թվականից բացվել է միջնակարգ դպրոցը, որտեղ և միջնակարգ կրթություն են ատացել Ջրառատի, Հովիտի և Կառնուտի երեխաները:

Գյուղը մինչև 1988թ երկրաշարժը ունեցել է չգործող եկեղեցի, տուֆակերտ երկհարկանի մշակույթի տուն, նոր կառուցված երկհարկանի տուֆակերտ մանկապարտեզի շենք, որը շահագործման էր հանձնվել 1988թ սեպտեմբերին, Երևանի <<Նեյրոն>> արտադրական միվորման կոնդենսատորների գործարան՝ 120 աշխատատեղով, տուֆակերտ երկհարկանի դպրոցական շենք:

1988թ.-ի երկրաշարժից հետո կանգուն է մնացել մանկապարտեզի շենքը, իսկ մշակույթի տունը գտնվում է վթարային վիճակում:

1991-1992թթ. Համայնքում իրականացվել է սեփականաշնորհման ընդհանուր գործընթացը:

"Հինք ընդունելով 821. <<ՀՀ վարչատարածքային բաժանման մասին>> ՀՀ օրենքում փոփոխություն Մուսայելյանի համայնքը վերանվանվեց Բասենի համայնք, իսկ՝ բնակավայրը գ.Բասեն :

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՎ ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Բասեն համայնքը գտնվում է Գյումրի քաղաքից 16կմ դեպի արևելք, Փամբակի լեռնաշղթայի արևմտյան փեշերին: Գյուղից արևելք և հյուսիս Փամբակի լեռնաշղթայի «Հարսնասար», «Առթափա» և «Չանաղասար» լեռներն են իրենց սառնորակ աղբյուրներով և ծաղկավետ մարգագետիններով, իսկ արևմուտքում՝ «Իսպիրի», «Թոփքար», և «Ղարավուլթափա» լեռներն են: Ծովի մակարդակից բարձր է 1600մ: Գյուղը սահմանակից է Ախուրյանի, Արևիկի, Այգաբացի, Ջրառատի, Հովիտի և Կառնուտի համայնքների վարչական տարածքներին:

Համայնքի աշխարհագրական դիրքը լեռնային է և գտնվում է ուժեղ սեյսմիկ գոտում:

Ձմռան տևողությունը մինչև չորս ամիս:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2015թ հունվարի 1-ի տվյալներով գյուղում հաշվառված են 1775 բնակիչ որից՝

արական սեռի՝ 936

իգական սեռի՝ 839

0-15տ-----327

16-62տ-----1322

63 և բարձր---130

ընտանիքների թիվը --- 459

Ժամանակավոր բացակայողներ --- 50

Ժամանակավոր բնակիչներ --- 58

ընտրողների թիվը --- 1305

թոշակառուներ --- 170

ընտանեկան նպաստ ստացող տնտեսությունների թիվը --- 41

աշխատունակ բնակչության թիվը --- 1322

Ժողովրդագրության ընդհանուր վերլուծության տեսանկյունից կարևոր է նաև նրա շարժի (փոփոխության)
 գնահատականը՝ կախված տարբեր ցուցանիշներից: Այդ փոփոխությունը ներկայացվում է հետևյալ աղյուսակի միջոցով:

N	Տարիներ	2015	2016	2017	2018	2019	2020
	Ցուցանիշներ						
1	Ծնունդ փաստացի	36					
2	Մահացություն	12					
3	Արտագաղթ /Ժամանակավոր/	420					
4	Ներգաղթ	--					
5	Բնակչության թիվը տարեսկզբին	1775					
6	Բնակչության թիվը տարեվերջին	1799					
7	Բացարձակ փոփոխություն	24					

1.1 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Տեղական ինքնակառավարումը համայնքում իրականացվում է համայնքի ղեկավարի և ավագանու միջոցով:

Համայնքապետարանի աշխատակազմի բնութագիրը՝

	Տվյալներ	ծննդյան թիվը	կրթությունը	մասնագիտությունը	զբաղեցրած պաշտոնը	ՏԻՄ-ում աշխատանքի փորձը
	Անուն Ազգանուն					
1	Համլետ Պետրոսյան	1976	բարձրագույն	ինժիներ	գյուղապետ	8
2	Մելանյա Թադևոսյան	1949	բարձրագույն	մանկավարժ	գյուղապետի տեղակալ	3
3	Ռոման Համայակյան	1986	բարձրագույն	ինժիներ	առաջատար մասնագետ	4
4	Հերիքնազ Կարոյան	1966	բարձրագույն	իրավաբան	առաջին կարգի մասնագետ	20
5	Հայկ Մնացյան	1990	բարձրագույն	հաշվապահ	համակարգչային օպերատոր	1
6	Աննա Հովհաննիսյան	1966	բարձրագույն	ինժիներ	հավաքարար	8
7	Օֆիկ Մուրադյան	1966	միջնակարգ	-	հավաքարար	8

Համայնքի ավագանին ընտրվել է 2014թ-ի : Համայնքի ավագանին կազմված է 7 անդամից: Համայնքի ավագանին համայնքի ղեկավարի հետ իրականացնում է որոշակի աշխատանքեր՝ կապված հարկահավաքման խնդիրների հետ, մասնակցություն է ցուցաբերում ծրագրերի իրականացմանը, բյուջեի ձևավորմանը:

Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 14-ի 22 որոշմամբ

Աղյուսակ. Շիրակի մարզի Բասենի մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Սահմանված դրույքը	Սահմանված դրույքաչափը (դրամ)	Ընդամենը (դրամ)
Բասեն 1	Տնօրեն	1	137000	137000	1	137000
2	Հաշվապահ-գործավար	1	99000	99000	1	99000
3	Դաստիարակ	1	92000	92000	1	92000
4	Դաստիարակ	1	92000	92000	1	92000
5	Դայակ	1	88000	88000	1	88000
6	Դայակ	1	88000	88000	1	88000
7	Խոհարար	1	85000	85000	1	85000
8	Խոհարարի օգնական-տնտեսվար	1	85000	85000	1	85000
	Ընդամենը	8	766000	766000	8	766000

1.2 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գյուղատնտեսությունը վարվում է նախալեռնային բնակլիմայական և ագրոտեխնիկական պայմաններին բնորոշ ձևով՝ հողագործության և անասնապահության տեսքով:

Հողագործությունը իրականացվում է անհատական գյուղացիական տնտեսությունների միջոցով, տնամերձ, սեփականաշնորհված և վարձակալած գյուղատնտեսության վարման տեսանկյունից նպաստավոր հողատեսքերի վրա:

- Գյուղացիական տնտեսությունների թիվը --- 459 հա
- Սեփականաշնորհված հողատեսք / վարելահող / --- 1440.19 հա
- Տնամերձ հողամասեր --- 135.41 հա
- Տնամերձ հողամասեր / շինություններ / --- 91.47 հա

- Բնակավայրի տարածք --- 135.41 հա
- Վարձակալությամբ տրված հողեր / վարելահող / --- 120 հա
- Պետական հողեր --- 1393.47 հա

Սեփականաշնորհված մեկ հողաբաժինը հաշվարկված նաև տնամերձը համայնքում 2հա է:

Բասեն համայնքի վարչական տարածքը կազմում է 4587.46 հա:

Համայնքին բնորոշ մշակվող գյուղատնտեսական կուլտուրոներն են բանջարաբոստանային կուլտուրաները և հացահատիկային կուլտուրաները, ստորև աղյուսակի տեսքով ներկայացվում է համայնքի գյուղատնտեսական արտադրության վարման հիմնական բնութագրերը, ըստ կարևորագույն ցուցանիշների`

Կուլտուրաներ	Հացահատիկային կուլտուրաներ	Խոտ	Ընդամենը
Ցուցանիշներ			
2015թ կուլտուրաների մշակության տակ զբաղեցրած տարածք	1550	210	1760
Միջին բերքատվությունը 2015թ գ/հա	36.13	37.14	-
Արտադրության ծավալները՝ տոննա	5600	780	-
Համայնքի եկամուտները մլն. դրամ			

Գյուղատնտեսության արտադրության կազմակերպման մյուս ձևը անասնապահությունն է, որը վարվում է անհատական գյուղացիական տնտեսությունների կողմից: Համայնքում անասնապահությամբ են զբաղվում տնտեսությունների մոտ 70% : Անասնապահության բնագավառի բնութագիրը ըստ ճյուղին բնորոշ կարևորագույն ցուցանիշների ներկայացվում է հետևյալ աղյուսակում՝

N	Անասնագլուխ	Խոշոր եղջերավոր անասուններ	Կովեր	Խոզեր (մայր և շիշակներ)	Ոչխարներ	Թռչուններ (Հավեր)	Համայնքի եկամուտը մլն. դրամ
	Ցուցանիշներ						
1	Թվաքանակը 01.01.201 թթ դրությամբ	1330	810	184	3316	3440	
2	Մսի արտադրություն (տոննա ամիս)	5.5		1	1.5		
3	Կաթի արտադրություն (1ամիս) տոննա		101.25				
4	ձվի արտադրություն (1ամիս) հատ					47040	
5	բուրդ (տոննա)				3.5		

Գյուղատնտեսական մթերքների իրացումը կատարվում է հանրապետության քաղաքների, հիմնականում Գյումրի քաղաքի շուկաներում:

1.3 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋՎԱՅԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում շրջակա բնական միջավայրի պահպանության առումով առաջնային խնդիր է համայնքի սանմաքրումը: Համայնքը չունի կենտրոնացված աղբավայր:

Համայնքում բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- շահագործման հանձնել կենսավառելիքի արտադրամասը,
- ավելացնել գյուղիկանաչապատ տարածքները,
- կառուցել սպանդանոց՝ կենդանիների մորթը թույլատրված նորմերում կատարելու համար,
- ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում՝ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար անցկացվող սեմինարների, դասընթացների, տեսագրվագրիների, ցուցանակների և հանրային իրազեկման այլ միջոցներով:

1.4 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքի կրթական համակարգը ներառում է ընդհանուր միջնակարգ կրթության բնագավառը:

N	Ցուցանիշներ	Աշակերտների թիվը	Դասարանների քանակը	Մանկավարժների թիվը	Ուսումնական հաստատություններում սովորողների թիվը	Փաստացի ֆիզիկական վիճակ

1	Մուսայեյանի միջնակարգ դպրոց	177	12	22	21	Նորակառույց
2	Բասենի մանկապարտեզ	75	2	8	-	Լավ

1.5 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Մինչ երկրաշարժը մշակութային գործը կազմակերպվում էր մշակութային տանը, որն ուներ մոտ 200 նստարան, թատերական, երաժշտական միջոցառումներ և կինոդիտումներ կազմակերպելու տեխնիկական հնարավորություն: Ներկայումս շենքը վթարային է:

1.6 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՄՊՈՐՏ

Առողջապահության համակարգում գործում է բուժ.ամբուլատորիա:

Աշխատում են 2 բուժ.քույր

1.7 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքապետարանը ստեղծել է իր պաշտոնական վեբկայքը՝ www.basen.am, որի նպատակը բնակչությանը համայնքի կառավարման վերաբերյալ իրազեկումն է, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ամրագրված հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդումը և բնակչության շրջանում տեղական իշխանության նկատմամբ վստահության բարձրացումը: Սակայն, կայքում տեղական ինքնակառավարման վերաբերյալ տեղեկատվության առկայությունը դեռևս հեռու է բավարար լինելուց և անհրաժեշտ է բարելավել կայքի աշխատանքը, բարձրացնել օպերատիվությունը: Համայնքապետարանում և բնակավայրերի

կենտրոնական հատվածներում տեղադրված են տեղեկատվական ցուցատախտակներ, որոնց միջոցով ապահովվում է համայնքի ղեկավարի եւ ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը:

Համայնքի ավագանին.

- ✓ 03.05.2016թ. N 12-Ն որոշմամբ հաստատել է «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը»
- ✓ 03.05.2016թ. N 13-Ն որոշմամբ հաստատել է «Համայնքում հանրային բաց լսումների և(կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը»
- ✓ 03.05.2016թ. N 14-Ն որոշմամբ հաստատել է «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»:

1.8 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառույթ: Համայնքային իշխանության ենթակառուցվածքների ներգրավմանը զուգահեռ, Քաղպաշտպանության շտաբի մեջ ներառված ծառայությունները ներկայացնում են համայնքային այլ պատկանելիության, մասնավորապես մի շարք կազմակերպություններ (կապի, տրանսպորտի, բժշկական, սանիտարա-հիգիենիկ ծառայությունների և այլ լորտներից), առանց որոնց անհնար է քաղպաշտպանության շտաբի ֆունկցիոնալ գործունեության արդյունավետ ապահովումը:

Բասեն համայնքի քաղպաշտպանության շտաբի պետն ի պաշտոնե համարվում է համայնքապետը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են քաղպաշտպանության շտաբի առանձին ծառայությունները՝ ծառայությունների պետերի համակարգմամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի իրավիճակի վերլուծության արդյունքում վերենհանվել մի շարքի մնահարցեր, որոնք ամփոփվել են կայացված են ստորև.

- ✓ Ոռոգման համակարգի անբավարար վիճակ
- ✓ Համայնքի խնդիրների լուծման գործընթացում բնակչության ներգրավվածության ցածր մակարդակ
- ✓ Կենդանիների մորթի իրականացման տարերայնություն
- ✓ Գյուղմթերքների իրացման դժվարություններ
- ✓ Դաշտավարության բնագավառում գյուղտեխնիկայի ձեռքբերման անհրաժեշտություն

- ✓ Համայնքում մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանման և ընդլայնման անհրաժեշտություն
- ✓ Համայնքի երեխաների և երիտասարդների գիտելիքների (ժամանակակից տեխնոլոգիաներ) բարձրացման անհրաժեշտություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹՅՎ-ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- Համախմբվածություն,
- Կրթական բարձր մակարդակ

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝

- Սեյսմիկ գոտում գտնվելը և բնակլիմայական վատ պայմանները,
- Մշակույթի տան վթարային վիճակը,
- Համայնքի գազաֆիկացման և հոռախոսաֆիկացման խնդիրները,
- Խմելու ջրի ցանցի վերանորոգումը,
- Ոռոգման ցանցի անմխիթար վիճակը,
- Ժամանակավոր կացարանների ֆիզիկական մաշվածության վիճակը,
- Կիսակառույց բնակարանների առկայությունը,

ՀԱՄԱՅՆՔԻՆՍՊԱՌԱՅՈՒՄԱՅՈՂՆԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

1. Տնտեսական բնույթի փոփոխություններ
2. Տեխնաճին բնույթի փոփոխություններ
3. Բարոյա-հոգեբանական բնույթի փոփոխություններ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գյուղ. Մթերքների արտադրության տեմպերի նվազումը
2. Գյուղ. Մթերքների իրացման դժվարությունները
3. Բյուջեի թերակատարումը

ՏԵԽՆԱԾԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Երկրաշարժեր
2. Հեղհեղատներ
3. Կարկտահարություն
4. Ուժեղ քամիներ
5. Ցրտահարումներ
6. Երաշտ

ԲԱՐՈՑԱ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գործազրկություն
2. Արտակարգ իրավիճակներ
3. Ժողովրդագրության բացասական հաշվեկշիռ

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Կազմակերպել մշակութային օջախի գործունեությունը
2. Կայունացնել համայնքի տնտեսությունը
3. Ապահովել անօթևան բնակիչներին բնակարաններով
4. Համայնքում ներդնել կլիմայի փոփոխության հարմարվողականությանը նպաստող մեխանիզմներ

3. ՀԱՄԱՅՆՔԻՖԻՆԱՆՍԱԿԱՆԻՐԱՎԻՃԱԿԻՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

	Եկամուտի տեսակը	2016 Փաստ.	Կանխատեսում	
			2017	2018
Ա	ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	8491.8	8532.0	-

1	Հողի հարկ	4479.4	4500.0	-
2	Գույքահարկ ընդմենը	3996.4	4000.0	-
3	Շենք շինություններ	8.6	8.6	
4	Տեղական տուրքեր	16.0	32.0	-
Բ	ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	1913.3	1313.3	
5	Պահուստային հողերի վարձավճարներ	1893.3	1293.3	-
6	Գույքի վարձակալության վճարներ	-	-	-
7	Տեղական վճարներ	20.0	20.0	-
8	Այլ ոչ հարկային եկամուտներ	-	-	-
Գ	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ՝ դոտացիա	28389.3	30000	-
Դ	ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՅՈՐԴ	511.5	500.0	-
	ԵԿԱՍՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ	38803	39853.9	-

ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ
ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁևԱԿԵՐՊՈՒՄ

ԾՐԱԳԻՐ 1

Համայնքի մշակույթի տան վերանորոգում

Նպատակ՝ աշխուժացնել համայնքի մշակույթային և հասարակական կյանքը

Խնդիր 1 Մինչև 2017թ կազմել համապատասխան նախագծա- նախահաշվային

փաստաթղթերը

Խնդիր 2 Մինչև 2018թ Դոնոր կազմակերպությունների և պետ բյուջեի միջոցներով վերանորոգել մշակույթի տունը

պատասխանատու

գյուղապետարան

Ծրագիր 2

Խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում

Նպատակը՝ համայնքի բնակչությանը ապահովել շուջորյա և բարձր որակի խմելու ջրով
Խնդիր 1 2016թ-ին պետ. բյուջեի և համայնքի բյուջեի միջոցներով կատարել խմելու ջրի ներքին ցանցի
հիմնանորոգում:

պատասխանատու գյուղապետարան

Ծրագիր 3

Ոռոգման ցանցի անցկացում

Նպատակը՝ համայնքի բնակչությանը ապահովել ոռոգման ջրով՝ մոտ 1000 հա:

Խնդիր 1 մինչև 2018թ-ն կազմել համապատասխան նախագծա- նախահաշվային

փաստաթղթերը

ԽՆՈՒՄ 2 մինչև 2018թ-ն պետ. բյուջեի և դոնոր կազմակերպությունների միջոցներով կատարել ոռոգման ցանցի անցկացում:

պատասխանատու գյուղապետարան

Ծրագիր 4

Էներգիայի ստացման այլընտրանքային աղբյուրների կիրառում համայնքում

Նպատակը՝ նվազեցնել մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակությունը և բնակչությանը ապահովել ավելի էժան էներգիայով :

Խնդիր 1 մինչև 2016թ-ի սեպտեմբեր շահագործման հանձնել կենսավառելիքի արտադրամասը՝ համայնքային բյուջեի և դոնոր կազմակերպությունների միջոցներով:

Խնդիր 2 մինչև 2017թ-ն համայնքի փողոցային լուսավորության ցանցը շահագործել էլ. էներգիայի ստացման ֆոտովոլտային համակարգով :

պատասխանատու գյուղապետարա

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐ ՎՈՂԳՈՒՅՔԻ (ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԵՎ ԱՅԼՆ) ԿԱՌԱՎԱՐՄԱՆ (ՕՏԱՐՄԱՆ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ) ՀՆԳԱՄՅԱԾՐԱԳԻՐԸ

Համայնքի սեփականություն համարվող գույքի (այդ թվում՝ հողերի) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2016-2020 թթ. ընթացքում համայնքը չունի օտարման ենթակա որևէ շենք կամ շինություն: Առկա են միայն օտարման ենթակա հողամասեր, այն էլ՝ քիչ քանակությամբ (աղյուսակ 23):

N	Ցուցանիշ	Չ/մ	Քանակը	Փաստացի շահագործում	Սարքին վիճակում է	Պիտանի չէ օգտագործման համար	Անհրաժեշտ է վերանորոգել
	Հիմնական միջոցներ						
1	Մշակույթի երկհարկանի շենք	հատ	1	այո	մասամբ	այո	այո
2	Մանկապարտեզի երկհարկանի շենք	հատ	1	ոչ	մասամբ	-	այո
3	Դպրոցի շենք	հատ	1	այո	այո	-	այո
4	Կոնդենսատորների գործորոնի շենք	հատ	1	ոչ	ոչ	-	այո

5	Կաթի վերամշակման գործարան	հատ	1	ոչ	ոչ	այո	ոչ
6	Բաղնիքի շենք	հատ	1	ոչ	ոչ	այո	այո
7	Փոստի փայտյա տնակ	հատ	1	այո	ոչ	այո	այո
8	Խմելու ջրի ջրավազան	հատ	1	այո	այո	-	ոչ
9	Ներտնտեսային ջրագծեր	կմ	40	այո	ոչ	այո	այո
10	Կամուրջ	հատ	1	այո	մասամբ	-	այո
11	Ճանապարհային ցանց	կմ	10	այո	այո	-	այո
12	Գերեզմանատուն	հատ	3	այո, 1-ը	-	-	-
13	Հուշարձաններ	հատ	3	այո	-	-	-
14	Մարզադաշտ	հատ	1	-	-	-	-
15	Պետական բնակելի շենքեր	հատ	36	այո	ոչ	այո	-

ԵԶՐԱՓՈՒՄ

ՀԶՀԾ-ն հանդիսանալու է համայնքի գալիք հինգ տարիների գործունեության ուղեցույցը: ՀՀ Շիրակի մարզի Բասեն համայնքի 2016-2020թթ հնգամյա ծրագիրը կազմված է՝ հաշվի առնելով տեղական բյուջեի եկամուտների միանգամայն անբավարարությունը, ինչպես նաև պետական բյուջեից հատկացվող սուբսիդիաները:

Ծրագրում տեղ են գտել մի շարք ռազմավարական խնդիրներ, որոնց իրականացումը անխզելիորեն կապված է պետական աջակցության հետ, որի համար կան որոշակի ակնկալիքներ:

Կարևորվում է նաև առանձին հիմնադրամների հետ համագործակցությունը:

Գյուղապետարանը հնարավոր ամեն ինչ անում է՝ ապահովելու սեփական եկամուտները, գտնելու նոր եկամուտի աղբյուրներ՝ համայնքի առջև ծառայած հիմնախնդիրները լուծելու համար:

